Արձանագրություն N 4
«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 օգոստոսի 2025 թ. ժ. 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Ս. Հասրաթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Մելքոնյան, Հ. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Նազարյան
Բացակա՝ Կ. Հակոբյան

1. **«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի մասնակցի պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման վերաբերյալ**

Գնահատող հանձնաժողովը ընթացակարգի բացման և գնահատման նիստերին բավարար է գնահատել Գոռ Նիկողոսյան ԱՁ-ի ներկայացրած հայտը և վերջինիս ճանաչել է առաջին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի հուլիսի 31-ին, մասնակցին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ և 35-րդ հոդվածների: Պայմանագիր կնքելու ծանուցումը ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ն պարտավոր էր ներկայացնել կնքվելիք պայմանագիրը, ինչպես նաև թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02-1» գնման պայմանագրի ապահովում՝ (տուժանքի տեսքով) նախահաշվային արժեքի տասը տոկոսի և որակի ապահովում՝ նախահաշվային արժեքի տասնհինգ տոկոսի չափով (տուժանքի տեսքով): Վերջինս չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը և համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

2. **Գնման գործընթացներին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ**

«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ին ներառել Գնման գործընթացներին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. **«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու վերաբերյալ:**

3.1 «ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից:

3.2 ՍԹԵԴՖԱՍՏ ՍՊԸ-ին համարել հաղթող մասնակից և համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի անգործության ժամկետն սահմանել առնվազն 10 օրացուցային օր:

3.3 **«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Է. Նազարյանին:
Հեռախոս՝ 060-474142:

Էլեկտրանային փոստ՝ gnumner@cadastre.am:
Պատվիրատու՝ Կադաստրի կոմիտե:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0, բացակա՝ 1:

Հանձնաժողովի՝
նախագահող՝
Անդամներ՝

Ս. Հասրաթյան

Ռ. Մելքոնյան

Հ. Վարդանյան

Հանձնաժողովի
քարտուղար՝

Է. Նազարյան